

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 7\_ԸՂ ԴԱՍԱՐԱՆ

1.Ո՞ր շարքի բոլոր բառերն են խոսքի մասեր:

- ա. ածական,մակբայ, ենթակա, բայ
- բ.որոշիչ,դերանուն,գոյական,վերաբերական
- գ.մակդիր,ածանց,թվական,հոլովում
- դ.դերանուն,կապ,ձայնարկություն,շաղկապ

2.Ո՞ր շարքում չկա որևէ խոսքի մաս:

- ա.բայ,կապ,վերաբերական
- բ.խնդիր,ստորոգյալ,առում
- գ.մակբայ,ձայնարկություն,շաղկապ
- դ.գոյական,թվական,դերանուն

3.Ո՞րն է խոսքի մաս:

- ա.հոլով
- բ.դերբայ
- գ.ածական
- դ.խոնարհում

4.Ո՞րը խոսքի մաս չէ:

- ա.կոչական, բ.շաղկապ գ.ձայնարկություն դ.ածական

### ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

5.Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:

- ա. վերելակ,հնչուն,փչակ
- բ.շեշտակի,հանք,հնչուն
- գ.արցունք,հայուհի,վայրէջք,
- դ.ուղղակի,փափկասուն, փախուստ

6.Ո՞ր շարքում են միայն գոյականներ

ա .սեր,սիրելի,տիկին

բ.օր,անձրև,գինի

գ.ատաղձ,գուղձ,ցնձագին

դ.ջուր,ծորակ,ջրառատ

7.Ո՞ր շարքում չկա գոյական

ա.հին,հագուստ,դարպաս

բ.վնասվածք,հարգելի, տնական

գ.սեղան,ծովային ,ծարավել

դ.գեղեցիկ, գրքային ,ամպամած

8.Ո՞ր շարքում չկա գոյական:

ա.հայելի,նազելի,գովելի

բ. Վնասվածք,հնչեղ,վայրենի

գ.բազկերակ,կանացի,հյուսն

դ.մայրենի,դյուցազնական,կանաչ

9.Ո՞ր բառը գոյական չէ:

ա.գեղջուկ,

բ.դայրոցական

գ.հյութալի

դ.սեր

10.Ո՞ր բառն է գոյական:

ա.կտրիչ գ.քննիչ

բ.հուզիչ դ.դյուրիչ

11.Ի՞նչ տեսակ գոյական չի լինում;

ա.անձնանիշ բ. ցուցական գ. իրանիշ դ. հատուկ

12. Ի՞նչ տեսակ գոյական չի լինում;

Ա.հատուկ բ. անձնանիշ գ. հասարակ դ.նույնանիշ

13.Ո՞րն է գոյականի տեսակ:

ա.միանիշ, բ. հատուկ գ.սեռական դ.որոշյալ

14. Ո՞րն է գոյականի տեսակ:

ա.որոշյալ բ. ուղղական գ.անորոշ դ.իրանիշ

15.Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ածանցավոր:

ա.հիացում,սլացք,լվացք,շողեր

բ. մայրիկ,շողք,կտորեղեն,մարգ

գ. Գիրք,գրքույկ,դեղնություն

դ. Սայլակ, բռնիչ,հոնք,դաս

16.Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ածանցավոր:

ա.փորձեր,հանքահոր,վերք,ուսուցչուհի

բ.սենյակին,վարորդ,ձկնորս,կոհակ

գ.ուղեգիր,տնակ,գրիչ,թերթիկ,

դ.ալիք,կղզյակ,այգեպան,բժշկուհի

17.Նշվածներից որ ը ածանցավոր չէ:

1.սանդուղք 2.պատուհան 3.պատուհան 4.հասակ

18.Նշվածներից որ ը անցանցավոր չէ:

1.փչակ 2.բերդից 3. միտք 4.զինվոր

19.Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են գրվում մեծատառ:

1.հայկ, նահապետ, տիրան, զինվոր

2.պապ, հասմիկ, արա, վարուժան

3.վարդան, նարգիզ, շուշան, նորայր

4.կարապետ,անուշ,վարդուհի, կայսր

20. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են գրվում մեծատառ:

1.երեմիա, իշխանուհի, սևակ, բակուր

2. ծաղիկ, վարդիթեր, անուշ, մանուշակ

3.լևոն, վարուժան, գոհար, աստղ

4.աստղիկ, նվեր,գնել ,պարգևել

21.Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում մեծատառ:

1.աշոտ բռնավոր, աշոտ երկաթ, կասպից ծով

2.հեռավոր արևելք, միջին ասիա, տիգրան մեծ

3. դեղձուն ծամ, սասնա ծոեր, իսպանիայի թագավորություն

4. խաղաղ օվկիանոս, մեծ միեր, տեր հարություն

22. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում մեծատառ:

1.անանիա շիրակացի, դավիթ անհաղթ, ողական ամրոց

2. մովսես խորենացի, սասունցի արշակ, դավիթ անհաղթ

3. նահապետ քուչակ, ներսես շնորհալի , գայանե եկեղեցի

4.արարատյան դաշտ, սուրբ գրիգոր եկեղեցի ,սկյուտարի սոխակ

23. Ո՞րը հատուկ գոյական չէ:

24. Որը հատուկ գոյական չէ:

1.հայրենիք

1.մարզիչ

2.կոտայք

2.համեստ

3.սրբուհի

3. արևիկ

4.ավան

4.կարապետ

25.Ո՞ր շարքի բոլոր գոյականները կարող են գործածվել նաև որպես հատուկ գոյական:

- 1.կաշի, տոպրակ, վահան
- 2.կթղա, գուղձ, մարզպետ
- 3.ռազմիկ, աստղիկ, վրեժ
- 4.վարուժան, երեխա, մանուկ

26. Ո՞ր շարքի բոլոր գոյականները կարող են գործածվել նաև որպես հատուկ գոյական:

- 1.ծաղիկ, փայլակ, շանթ
- 2.տղա, պատանի, համեստ
- 3.շուշան, ցորեն , կահույք
- 4.հայրենիք, տապան, ծիծեռնակ

27. Ո՞ր շարքի բոլոր գոյականները կարող են գործածվել նաև որպես հատուկ գոյական

- 1.վասակ, առյուծ, միեր
- 2.տիկին, տիրուհի, ազատուհի
- 3.համբարձում , համեստ, հեղինե
- 4.հուսիկ, վարագ, որսորդ

28.Ո՞ր բառը գոյական չէ:

ա. մրսող բ. գրող գ.դող դ. հոսող

29.Որ բառը գոյական չէ:

ա. հուզիչ բ. սուլիչ գ. վարիչ դ. գրիչ

30.Ո՞ր բառը գոյական չէ:

ա/ կոշկեղեն բ/հողեղեն գ/ խմորեղեն դ/զարդեղեն

30.Ո՞ր բառը գոյական չէ:

ա /աստղ բ /ավագ գ/ աղավնյակ դ/պատվիրակ

ԳՈՅԱԿԱՆԻ ԹԻՎԸ

31. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1/ հանքափոր, ուղեգիր, քարակույտ, պարերգ
- 2/ հանքափոր, հեռագիր, նստացույց, ամպակույտ,
- 3/ աղբակույտ, մանկագիր, հեռուստացույց, լրահոս
- 4/ մեծատուն, ձեռագիր, դրոշմանիշ, խմբերգ

32/ Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1/ հանածո, լրաբեր, ծարուղի, նորահարս
- 2/ ծառատունկ, ափսե, գրիչ, արկղ
- 3/ վագր, տերտեր, բարձունք, աղեցույց
- 4/ գամփռ, գիրք, լրագիր, խմբերգ

33/ Ո՞ր պնդումն է սխալ:

- 1/ Գոյականն ունի եզակի և հոգնակի թիվ:
- 2/ Գոյականի հոգնակի թիվը կազմվում է եր, ներ վերջավորությամբ:
- 3/ Բազմավանկ գոյականների հոգնակին կազմվում է միայն ներ-ով:
- 4/ Գինի բառը սովորական իմաստով հոգնակի թիվ չունի:

34/ Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում -ներ-ով:

- 1/ համաձուլվածք, սարահարթ, ազդ, ուղեցույց
- 2/ վիպասք, հազարապետ, բարձունք, շուրջկալ
- 3/ գործատու, վիպագիր, մեծատուն, վարձակալ
- 4/ տերտեր, թթվություն, վագր, հարկատու

35. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում -ներ-ով:

- 1/ ձեռագիր, հորեղբայր, մորաքույր, հացթուխ
- 2/ կոշկակար, սպա, ծովեզր, զգեստ
- 3/ սերունդ, ճամփա, հարս, նկար
- 4/ նեզր, տնկի, ծունկ, եզ

36. Ո՞ր բառի հոգնակին չի կազմվում -ներ-ով:

36. Ո՞ր բառի հոգնակին չի կազմվում -ներ-ով:

1. սպի, 2. ազդր 3. շտաբ 4. ծրար

37. Որ բառի հոգնակին չի կազմվում -ներ-ով:

1. հոգս 2. նկար 3. վրան 4. Մեծատուն

38 Փակագծերում տրված բառերից ընտրել ճիշտը:

1/Դոնբասի ածխահանքի /հանքափորերը, հանքափորները/ գործադուլ են անում:

2/Եղբայրս /ակնոցների, ակնոցի / ապակին խնամքով է սրբում:

3/Հայ ժողովրդի / դուստրերը , դուստրները / օժտված են աշխատասիրությամբ:

4/ Վիպագրերը , վիպագիրները / մեզ են ներկայացնում մեր ժողովրդի անցյալը:

39. Ի՞նչ տեսակ առում չի լինում:

1. որոշյալ 2. անորոշ 3. անձի 4. թվի

40. Ի՞նչ տեսակ առում չի լինում:

1. անորոշ 2. սեռական 3. անձի 4. իրի

41. Ո՞ր շարքի բոլոր բառակապակցությունների մեջ է գերադաս անդամը գործածվում մի-այն որոշյալ առումով:

ա/նշված տեսք/ը/, վերոհիշյալ տող/ը/, որևէ մարդ /ը/

բ/ամենագեղեցիկ աղջիկ/ը/, ամբողջ գյուղ/ը/, այդ տուն/ը/

գ/այլ շոր/ը/, որոշ երկրներ/ը/, բոլոր մարդիկ/ը/

դ/ ամեն գյուղ/ը/, որոշ երկրներ/ը/, բոլոր մարդիկ/ը/

42. Հայերենը քանի՞ հոլով ունի :

ա/ 4 բ/7 գ/ 8 դ/2

43. Հայերենը քանի՞ հոլովում ունի:

ա/10 բ/ 6 գ/7 դ/8

44. Նշվածներից ո՞րը հոլովի տեսակ չէ:

1. գործիական 3. տրական

2. ներգործական 4. սեռական



51.Ո՞ր շարքում են ներքին հոլովման գոյականները:

ա/տուն, անկյուն,,գարուն, կին

բ/սյուն, հորեղբայր, մայր, եգ

գ/տեր, եղբայր, արքայամայր, տատ

դ/եղբայր, վանահայր,արյուն, հաջողություն

52.Ո՞ր շարքում արտաքին հոլովման բառ չկա:

ա/օր, ձուկ, հայր, սյուն,

բ/ձուկ, մուկ, եգ,առու

գ/ երեխա, հարսնաքույր, ձմեռ, գարի

դ/ տուն, եղբայր, ձյուն, նախահայր

53.Ո՞ր շարքում են միայն արտաքին հոլովման գոյականներ:

ա/կիրճ,ձու, սեր, դուստր

բ/գիրք,տուն, փիղ,շոր

գ/հանդիպում, ձգան, տեր, մայր

դ/լույս,շարժում,ամառ,լիություն

54.Հոլովման ո՞ր ձևն է սխալ:

1. ձիու 2. արյամբ, 3.տատու 4.շարժման

**54.**Նշվածներից ո՞ր հատկանիշը չունի տրական հոլովը:

1.Տրական հոլովով են դրվում նախադասության նպատակի, ժամանակի, տեղի պարագաները:

2.Տրական հոլովը պատասխանում է ի՞նչ, ո՞վ հարցերին:

3.Տրական հոլովը ձևով նման է սեռականին, բայց կարող է ստանալ ն և ք հոդերը:

4.նախադասության մեջ հանգման խնդրի հոլովն է:

55.Քերականական ո՞ր հատկանիշը չունի հայցական հոլովը:

ա/Հայցական հոլովով միայն ուղիղ խնդիրն է դրվում:  
բ/Հայցական հոլովը հատուկ ձև չունի:

զ/ Հայցական հոլովը ձևով նման է ուղղականին, եթե իր է:

դ/Կարող է գործածվել թե որոշյալ, թե անորոշ առումներով:

56.Նշվածներից ո՞րն է հայցական հոլովով:

1. Աշունը գեղեցիկ է անտառում:

2. Աշնան գույները սքանչելի են:

3. Մեր մայրաքաղաքը նշում է իր տարեդարձը:

4. Աշխենի տարեդարձը նշվեց բնության գրկում:

57. Ո՞րը բացառական, գործիական, ներգոյական հոլովի ձև չէ:

1. հողից

2. հանդիպում

3. լճում

4. ձեռքով

58. Փակագծերի մեջ առնված բառերը գործածել համապատասխան հոլովներով:

1. Մեր /օրեր/ մարդ չգիտի ինչպես պահի իրեն նման իրավիճակում:

2. Վճիտ ջուրը /կարկաչ/ ցած էր հոսում:

3. Հրավիրված /նախարարներ/ եկել էին չորս-հինգը:

4. Տնօրենի /ներկայություն/ ոգևորեց հավաքվածներին:

59. Ո՞ր բառն է պատկանում այլաձև հոլովման:

1. կին 2. արտույտ 3. դուստր 4. Լոռի

60. Ո՞ր բառն է պատկանում այլաձև հոլովման:

1. մեջք 2. աղջիկ 3. կտուր 4. Գյումրի

61. Ո՞ր բառն է պատկանում այլաձև հոլովման:

1. Լոռի 2. հունձ 3. օձիք 4. սեր

62. Հայցական հոլովաձևերից քանի՞սն են ուղիղ խնդիր:

1. ավարտել աշխատանքը 2. մտնել անտառ

3. ընթրել զիշերը 4. գտնել երջանկություն

1) 4                    2) 1                    3) 2                    4) 3

## Ածական անուն

1.Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ ածականին:

ա/ Ածականը ցույց է տալիս գործողության կատարման հատկանիշ:

բ/Ածականը լինում է 2տեսակ՝ որակական և հարաբերական:

գ/Ածականը կարող է գործածվել գոյականաբար:

դ/ Ածականակերտ ածանցները լինում են և՛ վերջածանց , և՛ նախածանց:

2.Ո՞ր շարքի բառերում չկա ածական:

ա/աղքատ, սուրբ, ծովային, նեղուց

բ/վայրենի, միամիտ ,կաղ, հորթուկ

գ/ձագուկ, անապատ, քարքարուտ, աղմուկ

դ/հիվանդ, սուրբ, ծովակալ,գիժ

3. Ո՞ր շարքում են միայն որակական ածականներ:

ա/զվարթ,հաճելի, անտուն,կարևոր

բ/տաք,շոգ, արծաթյա, խորթ

գ/վայրենի ,ագահ,քաղցր ,փայտե

դ/խոշոր,ցածր,կույր,ագահ

4.Նշված հատկանիշներից ո՞րը ունի հարաբերական ածականը:

ա/Չունի համեմատության աստիճան:

բ/Կազմությամբ չի կարող լինել պարզ:

գ/Նախադասության անդամ է դառնում:

դ/Միայն որոշիչ են լինում:

5/Ո՞ր շարքի բոլոր բառերի գերադրական աստիճանն է ճիշտ կազմված:

ա/ամենից բարի, շքեղագույն, լավագույն

բ/բազմագույն, ամենացածրագույն, ամենալավ

գ/նորագույն, խոշորագույն,ամենաուժեղ

դ/ամենից բարեկազմ , հզորագույն, նեղագույն

6. Ո՞ր շարքի բոլոր բառերի գերադրական աստիճանն է ճիշտ կազմված:

ա/ամենից բարի, նոսրագույն, մեծագույն  
բ/բարձրագույն, երկարագույն, վարդագույն,  
գ/հնագույն, լավագույն, ամենահզոր  
դ/ամենագեղեցիկ, ամենախոշորագույն, ամենա տգեղ

7. Ո՞ր բառը ածական չէ:

ա/քաղի                      բ/հյուսիսի  
գ/մայրենի                դ/աղի

8. Ո՞ր բառը ածական չէ:

ա/վաղեմի                բ/կղզի  
գ/բերրի                    դ/նագելի

9. Ո՞ր շարքի բոլոր ածականներն են կազմված գոյականից:

ա/անկոչ, անհիշաչար, անպատեհ, անտուն  
բ/անշտրիք, անգեն, անուրախ, անափ  
գ/անգործ, անգիր, անձանոթ, դժկամ  
դ/անուժ, անկոչ, անհամար, անհարմար

10. Ո՞ր ածականը չունի համեմատության աստիճան:

ա/թունդ                    բ/ ջերմ  
գ/կույր                      դ/հզոր

11. Ո՞ր ածականը չունի համեմատության աստիճան:

ա/ ջղային                    բ/բոբիկ  
գ/աղքատ                    դ/հարուստ

12. Ո՞ր շարքի բոլոր ածականներն են հարաբերական:

ա/ սառցե, արծաթյա, հոգատար, լուսավոր  
բ/փայտաշեն, բրդե, ավարտական, կաղ  
գ/նոր, գյուղական, դպրոցական, նեղ

դ/կանացի, մարդկային, անտառապատ, ջրային

13. Ո՞րը հարաբերական ածական չէ:

ա/ սառցե                    բ/բամբակյա

գ/տաղտկալի            դ/արևելյան

14. Ո՞րը հարաբերական ածական չէ:

ա/ լեռնային              բ/ մարմարյա

գ/շոռայլ                    դ/նոյյան

15. Նշել այն ածականը, ուր կա ան նախածանցը:

ա/ անպիտան            բ/անապատ    գ/ անուշ            դ/անիծված

16. Նշել այն ածականը, ուր կա ան նախածանցը:

ա/անթառամ    բ/ անձրևային    գ/անագե    դ/ անոթի

17. Ո՞ր շարքի ածականների բաղադրիչներն են միասին գրվում:

ա / ի /գուր/, ճեփ /ճերմակ/, կաս / կարմիր/

բ/ հարավ / ամերիկյան/ , հյուսիս /կովկասյան/ , փոքր / ասիական /

գ/ արևելա /եվրոպական /, մանր /մունր /, սեփ /սև /

դ/ մաս /մաքուր / ,բարակ /մարակ /, հարավ /աֆրիկյան /

18. Ո՞ր բառերը հոմանիշներ չեն:

ա/ գունագուրկ - դժգույն

բ/ մաքուր - անբիծ

գ/ անշուք - շքեղ

դ/ թանկագին - թանկարժեք

19. Ո՞ր բառերը հոմանիշներ չեն:

ա/ հին - մաշված

բ/ բարձրագույն - ամենաբարձր

գ/ բարակ - հաստ

դ/ շքեղ - պերճ

20. Ո՞ր բառերը հականիշներ չեն:

ա/ ծովային - ցամաքային

բ / բարձր - վեհ

գ/ լայն - նեղ

դ/ հյուսիս - հյուսիսարևելք

21. Հատկանիշ արտահայտող ո՞ր բառը ածական չէ:

ա/ կրկին գգալ բ/ ուրախ ընտանիք

գ/ հարազատ դեմքեր դ/ հին աշխարհ

22. Հատկանիշ արտահայտող ո՞ր բառը ածական չէ:

ա/ կույր մարդ բ/ ծով համբերություն

գ/ աշխատասեր երեխա դ/ անձանոթ վայր

23. Տրված բարերից քանի՞սն են ածական:

ա/ 7 բ/ 5 գ/ 6 դ/ բոլորը

24.Ը նտրել նախադասության այն անդամը , որը տրված նախադասություններում

արտահայտված չէ:

ա/ Ձինջ երկնքում երևում սպիտակ աղավնիներ:

բ/ Մեր տունը երկհարկանի է:

գ/ Կարմիրը գեղեցիկ գույն է:

դ/ Այգեպանը ծառից քաղում էր ամենահասածները:

1. Որոշիչ 2. Ստորոգելի 3. Ենթակա 4. Ձևի պարագա

25.Ը նտրել այն տարբերակը ,որտեղ աջ կողմում գրվածը բառի փոխաբերական իմաստը չէ:

ա/ դեղին - գունատ, դալուկ

դ/ սև - զուսպ, պաշտոնական

բ/ գորշ - մռայլ, անհյուրընկալ

գ/կարմիր - երջանիկ, բախտավոր

26.Ո՞ր բառակապակցության ածականն է փոխաբերաբար գործածված:

1. դառը կորիզ
2. տափակ կտուր
3. կծու խոսք
4. թթու վարունգ

27. Ո՞ր բառակապակցության ածականն է փոխաբերաբար գործածված:

1. մեծ անտառ
2. կարմիր օրեր
3. ջերմ վերաբերմունք
4. կնճռոտ դեմք

28. Փակագծից հանի՛ր և տեղադրի՛ր համապատասխան բառը:

1. /Ականավոր, ականակիր/ գորավարին ընդունեցին որոտընդոստ ծափահարություններով:

2. Նա ազնվատոհմիկ մարդ էր /թավ, թավուտ/ ընչացքով:

3. Ջորավարին ջերմ ողջունեց /բարեկազմ, բարեհամբույր/ հայացքով մի քաղաքացի:

4. Ջինվորներին անչափ դուր եկան իրենց /ապառիկ, ապագա / անելիքները:

29. Կազմել կապակցված խոսք 3-4 նախադասությամբ /20-25բառ /: Բոլոր բառերի օգտագործումը պարտադիր է:

Անդորր, նուրբ, մելամաղձոտ, վտիտ, սարսափելի, սեզ, ջքնաղ, բարձրաբերձ, հեքի-աթային, երփներանգ:

30. Կազմել կապակցված խոսք 3-4 նախադասությամբ /20-25բառ /: Բոլոր բառերի օգտագործումը պարտադիր է:

Գարնանային, ծննդյան, մոտակա, մեծ, անդուր, զարմանալի, հիասքանչ, դանդաղ, անակնկալ, շնորհալի:

31 Կազմել կապակցված խոսք 3-4 նախադասությամբ /20-25բառ /: Բոլոր բառերի օգտագործումը պարտադիր է:

Արևաշող, գեղանի, ժպտադեմ, մերձակա, աչալուրջ, սրածայր, քաղցրահամ, ոսկերիգ, սրտաբաց, անմոռանալի:

Թ Վ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ի Ն

1. Նշված հատկանիշներից ո՞րը չունի թվականը:

ա/ Լինում են 2 տեսակ՝ քանակական և դասական:

բ/ Քանակական թվականները լինում են բացարձակ, բաշխական և կոտորակաբան:

գ/ Թվականը չի կարող նախադասության անդամ դառնալ:

դ/ Նախադասության մեջ կարող է գործածվել գոյականաբար:

2. Որ բառն է թվական;

ա/ տասնյակ      բ/ տասնամյակ      գ/ քառակուսի      դ/ մեկ- մեկ

3/ Ո՞ր բառն է թվական;

ա/ միլիոնավոր      բ/ եռօրյա      գ/ հնգօրյակ      դ/ հնգական

4. Ո՞ր բառն է թվական;

ա/ բազմաթիվ      բ/ թվական      գ/ հինգերորդ      դ/ կրկնակի

5. Ո՞ր բառն է թվական:

ա/ շատ      բ/ բազմիցս      գ/ քառորդ      դ/ վերջին

6/ Ո՞ր բառն է թվական:

ա/ քանիերորդ      բ/ հնգօրյա      գ/ հազարավոր      դ/ վաթսունչորս

7. / Ո՞ր բառն է թվական:

ա/ վաթսունամյա      բ/ իններորդ      գ/ քառակի      դ/ հարյուրյակ

8. Ո՞ր թվականի գրությունն է սխալ:

ա/ տաս տարեկան

բ/ հինգ- վեց

գ/ ութսունչորս

դ/ յոթանասունհինգ

9. Ո՞ր թվականի գրությունն է սխալ:

ա/ իննսունինը

բ/հինգերորդ

գ/ութ-ութ

դ/ տասնմեկամյա

10. Նշված թվականներից որի՞ փաղաղրիչներն են գրվում առանձին:

ա/ 26      բ/ 164      գ/ 2011      դ/ 1208

11. Նշված թվականներից որի՞ փաղաղրիչներն են գրվում առանձին:

ա/ 104      բ/ 49      գ/ 4088      դ/ 166

12. Ո՞ր բառակապակցության մեջ է թվականը գոյականաբար գործածված:

ա/ հիսունինը կիլոգրամ      բ/ երկու երրորդ մասնաբաժին

գ/ վաթսուն կիլոգրամ      դ/ հինգի բացակայությունը

13. Ո՞ր բառակապակցության մեջ է թվականը գոյականաբար գործածված:

ա/ յոթերորդ դար      բ/ նստել երեքով

գ/ քառասունինը տարեկան      դ/ աշխատանքի երեք չորրորդը

14. Ո՞ր բառակապակցության մեջ թվականը գոյականաբար չի գործածված:

ա/ հազարից մի փոքր քիչ      բ/ հիանալ երկրորդով

գ/ մոտենալ ութերորդին      դ/ չորսական շարքով

15. Ո՞ր բառակապակցության մեջ թվականը գոյականաբար չի գործածված:

ա/ բաժանել երեքի      բ/ առաջինից հրաժարվել

գ/ տասներկուերորդ կարգում      դ/ առաջինի վերադարձը

16. Քանակական թվականներից կազմել դասական թվականներ և գրել տառերով:

ա/ 139      բ/ 1678      գ/ 423      դ/ 89

17. Քանակական թվականներից կազմել դասական թվականներ և գրել տառերով:

ա/ 46      բ/ 88      գ/ 1953      դ/ 301

18. Տրված նախադասությունից դուրս գրել թվականները և գրել նրանց ձևաբանական հատկանիշները /տեսակը , կազմությունը:

Երկու տասնյակ մարդ էր հավաքվել երկհարկանի շենքի առաջին հարկում :

19. Տրված նախադասությունից դուրս գրել թվականները և գրել նրանց ձևաբանական հատկանիշները /տեսակը , կազմությունը:

Տասնյակ տարիներ առաջ քաղաքի այդ մասի երկու երրորդը կանաչապատված էր, իսկ վերջին ութ տարիների ընթացքում դրանց տեղում վեր են խոյացել եռահարկ շքեղ առանձնատներ:

20. Փակագծերում տրված տարբերակներից ընտրել ճիշտը:

ա/ Նա այդ մասին լսում էր / առաջի , առաջին անգամ /

բ/ Մարիամ տատիկը / ութանասուն , ութսուն / տարեկան է:

21. Փակագծերում տրված տարբերակներից ընտրել ճիշտը:

ա/ / Տաս , տասը / տարեկան մի երեխա էր ներս մտնողը:

բ/ Ստեփանը սովորում է / թիվ , թիվ համար / հիսունհինգ դպրոցում:

22. Փակագծերում տրված տարբերակներից ընտրել ճիշտը:

ա/ Ես լավ եմ ճանաչում ձեր դասարանի երեք / գերազանցիկին, գերազանցիկներին:

բ/ Կհանդիպենք ժամը թանգարանի մոտ ժամը / 5-ին, 5ին / :

23. Փակագծերում տրված տարբերակներից ընտրել ճիշտը:

ա/ Ուսուցչուհին նրանց նստեցրեց / երկու – երկու , երկու – երկուական / :

բ/ Տոնածառը զարդարելու համար քնեցի քսանհինգ / խաղալիք, խաղալիքներ / :

## Դ Ե Ը Ա Ն ՈՒ Ն

1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանվան տեսակներ:

1. հարաբերական, անձնական, ներգոյական, փոխադարձ
2. ցուցական , հարցական, հարաբերական, սեռական
3. անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ
4. ուղղական, սեռական, փոխադարձ, ժխտական

2. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանվան տեսակներ:

1. ցուցական, հարցական, որոշյան , ժխտական
2. հարաբերական, անձնական, տրական , կրավորական
3. գործիական, բաշխական, ժխտական, փոխադարձ
4. ցուցական, անորոշ, դերանուն, հարցական

3. Ո՞ր շարքում չկա անձնական դերանուն:

ա/ ինչ, յուրաքանչյուր, ինքը, ամեն ինչ

բ/ ողջ, իրենք, ոչինչ, այդ

գ/ միայն, իրար, ոչ ոք, բոլորը

դ/ երբ, դուք, նա, ուրիշ

4. Ո՞ր շարքում չկա անձնական դերանուն:

ա/ ինձանից, դրանցից, բոլոր, ամեն ոք

բ/ մեկնումեկը, ոչինչ, մենք, իրար

գ. Ոմանք, ինքը, միայնցից, յուրաքանչյուրը,

դ/ ով, ումից, դրանք, ովևե

5. Ո՞ր դերանունը գոյականից տարբեր հոլովում ունի:

ա/ ամենքը

բ/ նրանք

գ/ դուք

դ/ ոչ ոք

6. Ո՞ր դերանունը գոյականից տարբեր հոլովում ունի:

ա/ մենք

բ/ ամենքը

գ/ երբ

դ/ ոմանք

7. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն ունեն գոյականից տարբեր հոլովում:

ա/ դու, դուք, ոչինչ, ես

բ/ ինքը, նա, մենք, սա

գ/ յուրաքանչյուրը, ոմանք, երբ, ամեն ոք

դ/ իրար, մեկը, ամեն ինչ, սա

8. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն ունեն գոյականից տարբեր հոլովում:

ա/ իրար, մեկը, ամեն ինչ , դա

բ/ մենք, սա, ինքը, ես

գ/ ես, ոմանք, ոչ ոք ,ոչինչ

դ/ ինչ, ամբողջը, միմյանց, իրենք

9. Ո՞ր կապակցության մեջ դերանվան գործածության սխալ ձև չկա:

ա/ ինձ մոտ, քեզ համար, մեզ պես

բ/ իմ համար, քեզ համար, մեզ պես

գ/ քո չափ, մեզ չափ, մեզ մոտ

դ/ մեզ մոտից, քո մոտից, իրեն համար

10. Ո՞ր կապակցության մեջ դերանվան գործածության սխալ ձև չկա:

ա/ իրեն պես, քո մոտից, իմ համար

բ/ քեզ մոտ, նրա չափ, ինձ մոտ

գ/քո նման, մեր վրա, քեզ համար

դ/ ինձ նման, քեզ մոտից , իր համար

11.Ո՞ր շարքի դերանուններն են կազմությամբ պարզ:

ա/ երբ, մյուս, ձերոնք, որևէ

բ/ ոմն, ոչինչ, ով, ամենքը

գ/ մի, մյուս, այլ, երբ

դ/ ամենայն, ինչպես, միայն, այդպես

12. Ո՞ր դերանունն է կազմությամբ բարդ:

ա/ մերոնք

բ/ միևնույն

գ/ քանի

դ/ ոմն

13. Ո՞ր դերանունն է կազմությամբ բարդ:

ա/ սրանք բ/ ինձանից գ/ ամեն մի դ/ իրարից

14. Ո՞ր շարքում են միայն ցուցական դերանուններ:

ա/ ում , այս, ձեզ

բ/ այդպիսի , միևնույն, միմյանց

գ/ իրենց, մեկը, սրանք,

դ/ սրանից, դրանք, նա

15. Ո՞ր շարքում են միայն ցուցական դերանուններ:

ա/դրանից, սրանք, դա

բ/ մեկը, այսպիսի, նույն

գ/ այդպիսի, բոլորը , ոչ ոք

դ/ դրանց, երբևիցե , ամեն ինչ

16.Ո՞րը փոխադարձ դերանուն չէ:

ա/ միմյանցով,

բ/ իրար

գ/ մեկմեկու

դ/ դրանք

17. Ո՞րը փոխադարձ դերանուն չէ:

ա/իրարով

բ/ մեկմեկի

գ/ մեկմեկուց

դ/ յուրաքանչյուրից

18.Ո՞ր շարքում հարցական- հարաբերական դերանուն չկա:

ա/ ով, ինչպես, որերորդ,որտեղ

բ/ որքան, որպիսի, ինչու, ինչպես

գ/ ումից, ինչ, ինչպապ, երբ

դ/ սա, ինձանից, ինչևէ, միմյանցով

19. Ո՞րը փոխադարձ դերանուն չէ:

ա/ նրանցով

բ/ միմյանցով

գ/ մեկմեկով

դ/ իրարով

20. Ո՞րը փոխադարձ դերանուն չէ:

ա/ իրարից

բ/ միմյանց

գ/ մեկմեկու

դ/ ուրիշից

21. Ո՞ր պնդումն է սխալ:

ա/ Ամեն որ, յուրաքանչյուր որ դերանունները չունեն թեք հոլովաձևեր և հոգնակի թիվ:

բ/ Ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ:

գ/ Ողջ, ամբողջ, համայն դերանունները սովորաբար պահանջում են որոշյալ առումով լրացյալ:

դ/ Ամենքը, բոլորը դերանունները պահանջում են եզակի թվով ստորոգյալ:

22. Ո՞ր պնդումն է սխալ:

ա/ Ոչ որ և ոչինչ դերանունները որոշիչ հոդ չեն ստանում:

բ/ Ոչ մեկը դերանունը ուղղակիանում առանց հոդի չի գործածվում:

գ/ Ոչ որ ժխտական դերանունը գրվում է գծիկով:

դ/ Ժխտական դերանունները լինում են նախադասության անդամ:

23. Ընդգծված դերանունների գործածության ո՞ր ձևն է սխալ /ոչ գրական/:

ա/ Ի՛նչ հրաշալի տեսարան է բացվում այս բարձունքից:

բ/ Ի՛նչ հարկ այդ մասին նորից խոսելու:

գ/ Ինչումն է բանը, որ նա այդքան վիրավորված է:

դ/ Ինչ կլինի ասա՛ , գրի՛չ, ինձ էլ սիրես գոնե մի քիչ:

24. Ո՞ր նախադասության մեջ դերանվան գործածությունն է ճիշտ:

1. ՄԻ քանի օրով մեկնելու է իրեն պապերի հարազատ գյուղը:

2. Ոչ - ոքի մտքով չանցավ ստուգել նրա ասածները:

3. Փողոցում ինչ- որ մարդիկ էին հավաքվել նրա շուրջը:

4. Ինչպես է քո անունը:

25. Ո՞ր նախադասության մեջ դերանվան գործածության սխալ չկա:

1. Մի՛ արա մերձավորիդ այն , ինչ-որ չես ուզում , որ քեզ անեն:

2. Ոչ ոք մի հուսադրող խոսք չէր ասում նրան:

3. Չգիտեր ՝ ինչու համար հայտնվեց նման իրավիճակում:

4. Ամեն ոք մի հավաստի խոսք չէ ասում:

#### Հ Ո Ղ Ե Ր

1. Ո՞րը դերանվանական հոդի տեսակ չէ:

ա/ ստացակա բ/ անորոշ գ/ դիմորոշ դ/ ցուցական

2. Ո՞ր պնդումն է սխալ դերանվանական հոդի վերաբերյալ:

ա/ Ս, դ ն - ն հոդեր են , որոնք դրվելով անձի կամ առարկայի վրա , ցույց են տալիս, թե այն ում է պատկանում:

բ/ Ս և դ հոդերը տալիս են առարկային առաջին կամ երկրորդ դեմքի նշանակություն:

գ/ Ցուցական ս հոդը գործածվում է հարցական դերանվան փոխարեն:

դ/ Ն և ը հոդերը արտահայտում են խոսողին ծանոթ անձ կամ առարկա:

3. Ո՞րն է սխալ:

ա/ Մ եր դասն ավարտվեց:

բ/ Իմ գրքերիս պահարանը լի է արկածային գրքերով:

գ/ Քո ընկերը իսկական ընկեր է:

դ/ Բոլորս հույս ունեինք, որ ամեն ինչ բարեհաջող է լինելու:

4. Ո՞ր շարքում հոդ ունեցող բառաձև չկա:

ա/ ոանդան, խթան, ոլորան

բ/ քամին, օրերս, կտրոն

գ/ պարեն, կարկին, մառան

դ/ մախաղը, չնչին, մեղուն

5. Ո՞ր շարքում հող ունեցող բառաձև չկա:

ա/ խուրջին, տապան, ական

բ/ բոքոն, կտրոն, մետրոն

գ/ տղան, պարեն, մարմին

դ/ ուժգին, խիլան, սիրտս

6. Նշվածներից որ՞ը ցուցական հող չէ:

ա/ Վերջերս եղանակը ցրտել է:

բ/ Գիշերս առատ ձյուն է սպասվում:

գ/ Գուցե այս անգամ բախտս բերի:

դ/ Օրերս մեծ տոնակատարություն է լինելու:

Բ Ա Յ

1 Ո՞ր պնդումն է սխալ բայ խոսքի մասի վերաբերյալ:

ա/ Բայն արտահայտում է գործողություն, եղելություն:

բ/ Լինում են դիմավոր և անդեմ:

գ/ Նախադասության մեջ կարող են կատարել ստորոցյալի, գոյականական և բայական անդամի լրացման պաշտոններ:

դ/ Բոլոր բայերն ունեն եղանակ, ժամանակ, դեմք, թիվ և սեռ:

2. Ո՞ր պնդումն է սխալ բայ խոսքի մասի վերաբերյալ:

ա/ Առարկայի գործողություն ցույց տվող բառերը կոչվում են բայ:

բ/ է, կա, գիտի, ունի բայերը բայական հարց չեն ստանում:

գ/ Հարված բառը հարակատար դերբայ է:

դ/ Բայի սկզբնաձևն ունի -ել, -ալ վերջավորություններ:

3. Ո՞րը բայի կազմության տեսակ չէ:

ա/ պարզ բ/ ածանցավոր գ/ հարադրական դ/ ժխտական

4. Ո՞ր պնդումն է սխալ:

ա/ Բայի սկզբնաձևի հիմքը լինում է պարզ և ածանցավոր:

բ/ Բայի հիմքը պարզ է, եթե վերջավորությունից առաջ բայաձանց չկա:

գ/ -ել և ալ վերջավորությունները նաև ածանցներ են:

դ/ Բայաձանցները լինում են միայն կրավորական, բազմապատկական և սուկաձանցավոր:

5. Ո՞ր շարքի բոլոր ձևերն են բայաձանցներ:

ա/ ատ, ոտ, ացն, ում, վ, ան

բ/ են, ային, չ, կոտ, վ, ցն

գ/ ան, են, կոտ, ոտ, եցն, ցն

դ/ արտ, արդ, վ, ատ, եց, ն

6. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ:

ա/ սպառնալ, լրանալ, ոռնալ, մեռնել

բ/ թռչնել, հանգչել, մրոտել, որոտալ

գ/ կայծկլտալ, խայտալ, հիմնել, ավարտել

դ/ կառչել, տառապել, թեյել, հենել

7. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սուկաձանցավոր:

ա/ համընկնել, փախչել, ուրանալ, մոտենալ

բ/ հասնել, սառչել, հոգնել, կառչել

գ/ մտնել, ընկնել, խրտնել, ծլարձակել

դ/ երկնչել, սառչել, հզորանալ, իջավ

8. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սուկաձանցավոր:

ա/ կգտնենք, կմտնեմ, ունեցա, կամենալ

բ/ հանգչել, հնչել, հանգել, կառչել

գ/ խայտալ, մեռնել, շորորալ, ճանաչել

դ/ ցատկոտել, կորցնել, խաբվել, դարձնել

9. Ո՞ր շարքում սուկաձանցավոր բայ չկա:

ա/հանձնել, հեծնել, հանդգնել, սփրթնել

բ/հանգչել, հնչել, ժանաչել, ներշնչել

գ/ խայտալ, մեռնել, շորորալ, վրնջալ

դ/ մթագնել, պժնել, խրտնել, կանգնել

10. Ո՞ր շարքում սուսկածանցավոր բայ չկա:

ա/ զարթնել, պոկոտել, հանգչել, փախցնել

բ/մարտնչել, կառչել, մթնել, բռնել

գ/ կարկաչել, մոլեգնել, այրվել, մտնել

դ/ մրոտել, մերձենալ, խայտալ, դեղնել

11. Ո՞ր շարքի բոլոր բայերն ունեն բազմապատկական ածանց:

ա/ մրոտել, ժանկոտել, համառոտել

բ/ ծեծկոտել, կապոտել, փշրտել

գ/ մկրտել, ցատկոտել, նստոտել

դ/ յուղոտել, կոխկոտել, կտրտել

12. Ո՞ր շարքում բազմապատկական բայ չկա:

ա/օժտել, ճխլտել, զտել, կարոտել

բ/ նկատել, անջատել, շաղակրատել, կտրատել

գ/ փոշոտել, ցատկոտել, աղտոտել, կնճռոտել

դ/ նկատել, խախտել, ցեխտել, խոչընդոտել

13. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պատճառական:

ա/լիացնել, շողացնել, հարցնել, բերել տալ

բ/ խաղաղեցնել, բարև տալ, խոռացնել, ուտեցնել

գ/ թրթռացնել, փախցնել, հիացնել, շուռ տալ

դ/ կորցնել, հիշեցնել, մոտեցնել, լսեցնել

14. Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ չկա:

ա/ Այդ երգի մեղեդին ինձ հիշեցրեց իմ անցյալը:

բ/ Դաստիարակը դբաղեցնում էր փոքրիկին:

զ/Ձուկը գցեցի ջուրը , և նա իսկուն վերակենդանացավ;

դ/ Միքայելը այլևս չէր անհանգստացնում Շուշանիկին:

15.Ո՞ր պնդումն է սխալ:

ա/ Չ սուկածանց ունեցող բայերը **ե** խոնարհման են:

բ/Ան , են սուկածանց ունեցող բայերը **ա** խոնարհման են:

գ/Պատճառական ածանց ունեցող բայերը կարող են լինել **և՛ ե**, և **ա՛** խոնարհման:

16. Բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ:

Մոլեգնել, խոցոտել, իմանալ, հեռանալ, խելագարվել, գովաբանել, մեկնել, փառաբանել, մոնչալ, հորատել:

1. երեքը

2. հինգը

3. վեցը

4. ութը

17 .Բայերից քանի՞սն են կազմված գոյականներից:

Երջանկանալ, քարանալ, մերձենալ, տիրանալ, աքլորանալ, չորանալ, ընկերանալ, ծիծաղել, լրջանալ, հզորանալ:

1. երեքը

2. հինգը

3. վեցը

4. ութը

18.Ո՞ր շարքի բոլոր բայերն են **ա** խոնարհման:

ա/ դարձե՛ք, ել, հոգացել, մի՛ տուր

բ/ մոռացել եմ, պիտի խաղամ, շողա՛

գ/ կերանք, հոգացող, բարձրացավ, տալիս է

դ/ պիտի գթա, ցնցեց, ջանում է

19. Ո՞ր շարքի բոլոր դերբայական ձևեր են ճիշտ:

ա/ փախնելիս, խոսելիս, զվարճանալիս

բ/ փախած, խոսեցրած, զվարճացած

զ/ փախչող, խոսացող, զվարճացող

դ/փախչել, խոսալ, զվարճանալ

20. Ընդգծված դերբայական ձևերից որի՞ կազմությունն է սխալ:

ա/Անձրևի **կաթած** տեղը մի մեծ խոռոչ է բացվել:

բ/ Օրը երկու անգամ դեղ էր **կաթացնում** հիվանդի աչքերի մեջ:

գ/ Նա միշտ **հիշեցնելու** է ինձ այդ մասին:

դ/ **Տուժած** կողմին օգնություն ցուցաբերվեց:

21. Ո՞ր նախադասության մեջ դերբայական սխալ ձև կա:

ա/ Նա ասես սարի լանջին բուսած մանուշակ լինի:

բ/ Քնքշորեն բուրացող ծաղիկները մի պահ մեղմեցին նրա հոգու ցավը:

գ/ Սևաթույր նժույգին հեծած ձիավորը մտավ Ողական ամրոց:

դ/ Երեխայի համար գնել էր հեքիաթներ պատմող մի տիկնիկ և խոսող մի շնիկ:

22. Ո՞ր նախադասության մեջ դերբայական ձևի սխալ գործածություն չկա:

ա/ Նա շատ էր ուզում փախնել այդ անտառքեր աշխարհից:

բ/ Այդ միջադեպը ոչ մի ազդեցություն չի կարող թողնել արդյունքի վրա:

գ/ Երկար քայլելուց ոտքերը հոգնել էին:

դ/ Նա ուտելուց շարունակ խոսում էր:

23. Քերականական ո՞ր հատկանիշն է բնորոշ միայն բայերին:

ա/ դեմքի      բ/ թվի      գ/ հոլովի      դ/ խոնարհում

24. Քերականական որ հատկանիշն է բնորոշ միայն բայերին:

ա/խոնարհում      բ/ սեռ      բ/ առում      գ/ դեմք

25. Ո՞ր շարքում են միայն ձևաբայեր:

ա/երգի, մեծացնի, հիշի փախել

բ/ ուտելու, խոսում, թռչել, պարել

գ/ մոտեցնի, հուզվելու, մտնել ,հուշել

դ/ եկել, բերել, տանել, պատմել

26. Ո՞ր շարքում են միայն ձևաբայեր:

ա/ մոտենալ, գտել, ուզում, կերած

բ/ հոգնում, երագելու, գրկել, թռչի

գ/ մոտենալով, խոսելու, քնածին, քնելը

դ/ գտել, դրել, ասում, ասելուց

27. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

ա/ կարդալ, գթալ, գտել

բ/ ծխալ, ցոլալ, դրել

գ/ խայտալ, վխտալ, կերել

դ/ զգալ, թվալ, տոկալ

28.